«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1__

Ք.Երևան **24.08.2018թ.**

2018թ. օգոստոսի 24-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2018-2019 ուստարվա անդրանիկ նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը, որը միաձայն հաստատվեց:

1. 2018-2019 ուստարվա Մանկավարժական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատման մասին*:*

   (Զեկուցող, Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյան):
2. 2018-2019 ուստարվա ընդունելության արդյունքների ամփոփում:

   (Զեկուցող, Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյան):
3. 2018-2019 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Թ.Համբարձումյան):
4. 2018-2019 ուստարվա ուսումնական պլանների քննարկում:

   (Զեկուցող, ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյան):
5. 2018-2019 ուստարվա ամբիոնների դասաբաշխման և ծավալի քննարկում:

   (Զեկուցող, ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանի ելույթը 2018-2019 ուստարվա Մանկավարժական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին, Ի.Վարդանյանը տեղեկացրեց, որ 2018-2019 ուստարվա Մանկավարժական խորհրդի առաջին նիստով պետք է քննարկել և հաստատել խորհրդի կազմը, տարեկան աշխատանքային պլանը և ընտրել քարուղարին:

Նա նշեց նաև, որ հաշվի առնելով քոլեջում իրականացվող բարեփոխումները անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, այդ նպատակով առաջարկեց խորհրդի

կազմում ընդգրկել ուսանողական խորհրդի կազմից բարձր առաջադիմությամբ սովորող մեկ ուսանող, որից հետո ներկայացրեց Խորհրդի նոր կազմը (ցուցակը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Ուսումնական մասի քարտուղար Լ.Հարությունյանը և դասախոս Մ.Նանյանը իրենց ելույթներում նշեցին, որ ներկայացված ուսանողը լիովին արժանի է լինելու խորհրդի կազմում և ներկայացնի ուսանողների շահերը: Այդ իսկ պատճառով առաջարկեցին կազմի հաստատման հարցը դնել քվերակության:
- Ի.Վարդանյանը առաջարկեց խորհրդի քարտուղար ընտրել ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանին: Լ.Հարությունյանը լինելով Տնօրինական խորհրդի քարտուղար, լավ տիրապետում է ուսումնական գործընթացին և կկարողանա պատշաճ կերպով իրականացնել նաև Մանկավարժական խորհրդի քարտուղարի պարտականությունները: Եզրափակելով ելույթը Ի.Վարդանյանը ներկայացրեց նաև 2018-2019 ուստարվա տարեկան աշխատանքային պլանի նախագիծը: Նա նշեց, քանի որ, պլանի նախագիծը նախապես ներկայացվել է խորհրդի անդամներին, ապա խնդրեց անհրաժեշտության դեպքում արտահայտվել առաջարկություններ կամ դիտարկումներ ներկայացնելու համար (պլանի նախագիծը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Մանկավարժական խորհրդի նոր կազմը:
2. Հաստատել Լ.Հարությունյանի թեկնածությունը Մանկավարժական խորհրդի քարտուղարի պաշտոնում:
3. Հաստատել Մանկավարժական խորհրդի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը:

2. **Լսեցին՝** Ընդունելության հանձնաժողովի նախագահ Ի.Վարդանյանի ելույթը 2018-2019 ուստարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ:

Ի.Վարդանյանը ներկայացրերց 2018-2019 ուստարվա ընդունելության արդյունքները: Նա նշեց, որ համեմատաբար շատ էին դիմորդնորը հիմնական ընդհանուր կրթությամբ «Դեղագործություն» մասնագիտությամբ: Ավելացրեց նաև միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության «Դեղագործություն» մասնագիտության դիմորդների թիվը շատ էր մյուս մասնագիտության դիմորդների թվից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Քոլեջի ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ Թ.Համբարձումյանը, պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանը, ընդունող հանձնաժողովի անդամ Ն.Եգորյանը:
- Քննական հանձնաժողովի նախագահ Կ.Մովսիսյանը և անդամ Ա.Մարգարյանը իրենց ելույթում նշեցին, որ ՀՀԿԳ նախարարության և ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից վերահաստատված 14.11.2016թ №1152-Ն հրամանով քոլեջի «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունը անցնում է մոդուլային ծրագրով ուսումնառության:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Ուսումնական մասի քարտուղար Լ.Հարությունյանին կազմակերպել հանդիպումներ առաջին կուրսի ուսանողների հետ և ծանոթացնել քոլեջի գործունեությանը:

3. **Լսեցին՝** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Թ.Համբարձումյանի ելույթը 2018-2019 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Թ.Համբարձումյանն իր ելույթում նշեց, որ Քոլեջը ամբողջովին պատրաստ է 2018-2019 ուսումնական տարվա մեկնարկին: Ուսումնական մասի կողմից իրականցվել են նախատեսված համալիր միջոցառումներ, մասնավորապես՝

- Ձեռք են բերվել անհրժեշտ գրենական պիտույքներ՝ անհրժեշտ քանակի ուսումնական դասամատյաններ, ուսանողական գրքույքներ և տոմսեր:
- Վերանայվել և կազմվել են բոլոր ուսումնական պլանները և հանրակրթության բոլոր ծրագերը՝ թվով 15 առարկայի:
- Քոլեջը ապահովված է անհրաժեշտ դասախոսական կազմով:
- Կազմվել են 2018-2019 ուստարվա ըստ կուրսերի դասացուցակները, ձևավորվել հիմնական ընդհանուր կրթությամբ առաջին կուրսի և մասնագիտական կուրսերի խմբերը և նշանակվել են դասղեկներ:
- Կարգի են բերվել ուսումնկան լսարանները և լաբորատոր կաբինետները:
- Ուսումնական գործընթացի անխափան աշատանքների համար աբիոներին են տրամադրվել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:
- Դասախոսկան կազմի որակի բարձրացման նպատակով մշակվել է դասալսումների կազմակերպման և գնահատման նոր կարգի նախագիծը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանը իր ելութում ավելացրեց, որ այս պահին Քոլեջը ամբողջովին պատրաստ է նոր ոսումնական տարվա մեկնարկին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատրված նախապատրաստական աշխատանքները նախնական գնահատել բավարար:
2. Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Թ.Համբարձումյանին ուսումնական տարվա ավրտին ներկայացնել կատարողական զեկույց, ըստ կատարված գործողությունների:

4. **Լսեցին՝** Ուսումնական մասի քարտուղար Լ.Հարությունյանի ելույթը 2018-2019

ուստարվա ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների նախագծերի քննարկման վերաբերյալ:

Իր ելույթում նա նշեց, որ ուսումնական պլանների նախագծերը կազմվել են 2018-2019 ուստարվա նախապատրաստական աշխատաքների ընթացքում և նախնական քննարկվել են ամբիոնների վարիչների հետ (ուսումնական պլանների նախագծերը կցվում են):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Թ.Համբարձումյանն ու դասախոս Մ.Նանյանն իրենց ելույթում նշեցին, որ ուսումական պլանների նախագծերը լիովին համապատասխանում են պետական կրթական չափորոշիչի բոլոր պահանջներին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հավանություն տալ 2018-2019 ուստարվա ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների նախագծերին:
2. Ուսումնական մասի քարտուղար Լ.Հարությունյանին հանձարարել երաշխավորված ուսումնական պլանները ներկայացնել տնօրինական խորհուրդ:

5. **Լեցին՝** Ուսումնական մասի քարտուղար Լ.Հարությունյանի ելույթը 2018-2019 ուստարվա ամբիոնների դասաբաշխման և ծավալի ներկայացման վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում շեց, որ դասաբաշխումը կատարվել է ըստ ուսումնական պլանի և ուսումնական խմբերի: Ընդհանուր առմամբ ամբիոններին հատկացված բեռնավածությունը համեմատած նախորդ տարվա, էականորեն չի փոխվել: Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանն առաջարկեց անհրաժշտության դեպքում քննարկել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը առաջարկեց երաշխավորել և ներկայացնել Տնօրինական խորհուրդ հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել 2018-2019 ուստարվա ամբիոնների դասաբաշխումը և ծավալը:
2. Ուսումնական մասի քարտուղար՝ Լ.Հարությունյանին հանձարարել դասաբաշխման և ծավալի թերթիկները տրամադրել Տնօրինական խորհուրդ հաստատման:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Ք.Երևան **26.12.2018թ.**

2018թ. դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի հերթական նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և այն դրվեց քվեարկության, որն էլ միաձայն ընդունվեց:

1. 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի արդյունքների ամփոփման մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսման վարձերի գանձման ընթացքի մասի:

(Զեկուցող, Հաշվապահ՝ Ա.Սարգսյան):

3. Քոլեջի գործունեության վերաբերյալ տարեկան պլանավորման և կատարողականի նոր ձևաչափի նախագծի ներկայացման մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

4. Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման աշխատանքների ընթացքի մասին:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի արդյունքների ամփոփման վերաբերյալ:

Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ոչ մի թերացումներ, բացթողումներ չեն արձանագրվել: Ուսումնական գործ-ընթացը մեկնարկել է ժամանակին, քննարշրջանը կազմակերպվել է համաձայն ուսումնա-

կան պլանի և ժամանակացույցի: Պատրաստ են բոլոր ամբիոնների կողմից կատարած աշխատանքների հաշվետվությունները՝ ըստ որոնց կանոնակարգված աշխատանքներ են կատարվել ընթացիկ ուստարվա երկրորդ կիսամյակին նախապատրաստվելու ուղղությամբ: Քոլեջում ՈԱ պատասխանատուի կողմից որակի ապահովման ուղղությամբ իրականացվում համալիր միջոցառումներ, համալրվել է գրադարանը, իրականացվել են մասնագիտական խորհրդատվություններ ամբիոններին դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ: Ն.Եգորյանը ներկայացրեց նաև մատենավարության ստուգման արդյունքները, ուսումնական մասի վարիչի և ամբիոնների վարիչների հաշվետվությունները ամփոփ վերլուծությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մանկավարժական խորհրդի նախագահ, տնօրեն Ի.Վարդանյանը, ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանը, մեթոդիստ, կարիերայի բաժնի պատասխանատու Ն.Սահակյանը, գրադարանավար Լ.Պռազյանը: Նրանք կատարեցին որոշ լրացումներ և ուսումնական գործընթացի արդյունքները առաջարկեցին գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և գնահատել բավարար:
2. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանին պատրաստել համապատասխան տեղեկանք և ներկայացնել Տնօրինական խորհրդի մոտակա նիստում:

2. **Լսեցին՝** Հաշվապահ Ա.Սարգսյանի ելույթը 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսման վարձերի գանձման ընթացքի վերաբերյալ:

Հաշվապահ Ա.Սարգսյանն իր ելույթում նշեց, որ այս հարցը ամբողջությամբ և հանգամանորեն կներկայացվի Տնօրինական խորհրդի հերթական նիստում: Իսկ այս անգամ հակիրճ ներկայացրեց 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակում կատարված ուսման վարձերի գանձման ընթացքը: Նա նշեց, որ ուսումնական մասի և ամբիոնի վարիչների համատեղ ջանքերով ուսման վարձերի հավաքագրումը կատարվել է 90%:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատրված աշխատանքները գնհատել բավարար:
2. Հանձնարարել ամբիոնի վարիչներին այս հարցի վերաբերյալ լինել հետևողական:

3. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը Քոլեջի գործունեության տարեկան պլանավորման և կատարողականի նոր ձևաչափի նախագծի ներկայացման վերաբերյալ:

Ն.Եգորյանը նախ ընթերցեց 11.10.2018թ. Տնօրինական խորհրդի նիստի որոշումը (արձանագրություն 2), որից հետո ներկայացրեց ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի և իր կողմից մշակված տարեկան պլանավորման և կատարողականի նոր ձևաչափերի նախագծերը: Շարունակելով ելույթը, Ն.Եգորյանը հանգամանորեն բացատրեց պլանի և տարեկան կատարողականի նոր ձևաչափի առանձնահատկությունները: Նշելով, որ քոլեջում տնօրեն Ի.Վարդանյանի հանձնարարությամբ մեկնարկել է հիմնարար բարեփոխումներ և հաջորդ ուստարվանից վերանայվելու են քոլեջում գործող բոլոր ներքին իրավանորմա-տիվային փաստաթղթերը: Այդ իսկ պատճառով նա առաջարկեց ծանոթանալ ներկայացված փաստաթղթերին և մինչև հաջորդ նիստը, եթե կլինեն կոնկրետ առաջարկներ, ապա գրավոր տեսքով ներկայացնել ուսումնական մաս:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ամբիոնի վարիչներ Լ.Բաբայանը և Ա.Մարգարյանը իրենց ելույթում նշեցին, որ ներկայացված ձևաչափերը շատ պարզ են և հասկանալի: Առաջարկված նոր ձևաչափով կազմվում է մեկ անգամ հնգամյա պլան և յուրաքանչյուր տարվա վերջում ըստ պլանի գործողությունների անհրաժեշտ է լինելու ներկայացնել կատարողական: Առաջարկեցին տալ ժամանակ մանրամասն ուսումնասիրելու և համապատասխան առաջարկություններ ներկայացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն, սեղմ ժամկետներում ներկայացնել առաջարկություններ կամ դիտարկումներ:
2. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին անհրաժեշտության դեպքում ստորաբաժանումներին տրամադրել խորհրդատվություն:

4. **Լսեցին.** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում նշեց, որ քոլեջում մեկնարկել և ակտիվ իրականացվում է որակի ապահովման գործընթացներ, որի նպատակն է պատշաճ պատրաստվել ինստիտուցիոնալ հավատարմագրմանը: Նա նշեց, որ կազմակերպվել են հանդիպումներ և խորհրդտվություններ ՈԱԱԿ հիմնադրամի մասնագետների կողմից: Արդյունքում անհրաժեշտ է ուսումնասիրել և ծանոթանալ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափին: Եզրափակելով ելույթը, Լ.Հարությունյանը հանձնարարեց ամբիոնի վարիչներին նիստից հետո մոտենալ իրեն և վերցնել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափը ծանոթանալու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն ու ամբիոնի վարիչներ՝ Հ.Գրիգորյանն ու Ա.Մարգարյանն իրենց ելույթում նշեցին, որ անհրաժեշտ է ձևավորել աշխատանքային խումբ, ով կհամակարգի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափի մշակման աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձարարել Ուսումնական մասի մարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանին մշակել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների իրականացման պլան-ժամանակացույց:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Ք.Երևան **14.01.2019թ.**

2019թ. հունվարի 14-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի հերթական նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և այն դրվեց քվեարկության, որն էլ միաձայն ընդունվեց:

1. 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփման և առարկայական պարտքերի մարման հետ կապված հարցերի քննարկում:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
2. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի մեկնարկման ժամանակացույցի ներկայացման մասին:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման կառուցվածքի վերանայման առաջարկության մասին:

   (Զեկուցող, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):
4. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2016-2025 թվակնների զարգացման ռազմավարական ծրագրի վերանայման առաջարկության մասին:

   (Զեկուցող, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփման և առարկայական պարտքերի մարման հետ կապված հարցերի վերաբերյալ:

Ն.Եգորյանը նախ ողջունեց և շնորհավորեց նոր տարվա կապակցությամբ խորհրդի բոլոր անդամներին, որից հետո ներկայացրեց 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի ձմեռային քննաշրջանի ամփոփ արդյունքները: Նա նշեց, որ քննությունները անցկացվել են նախապես վերանայված քննական հարցաշարերով և քննատոմսերով: Ընդհանուր մասնակցությունը կազմել է 95%, հարգելի պատճառով 5%-ը չի ներկայացել քննության օրը: Բացակա ուսանողների հետ տարվել են բացատրական աշխատանքներ և ամբիոնների կողմից տրվել մասնագիտական խորհրդատվություններ:

Անցկացվել են միջմոդուլային և միջառարկայական համալիր քննություններ: Քննությունները վերահսկվել են, կայացել են ըստ վարման կարգի, ուսանողների կողմից գիտելիքների ստուգման և գնահատման վերաբերյալ բողոքարկումներ չեն արձնագրվել:

Ն.Եգորյանն եզրափակիչ խոսքում ներկայացրեց ըստ ուսումնական պլանների քննաշրջանում առարկայական պատքեր ունեցող ուսանողների ցանկը և հայտնեց, որ ուսանողների կողմից առարկայական պարտքերի մարման շրջան կսահմանվի 2019թ. փետրվարի 12-ից մինչև մատի 12-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատնքները գնահատել բավարար:
2. Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին հանձնարարել մանկավարժական խորհրդի հաջորդ նիստին ներկյացնել ամփոփ տեղեկատվություն առարկայական պարտքերի մարման աշխատանքների վերաբերյալ:

2. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի ժամանակացույցի ներկայացման վերաբերյալ:

Ն.Եգորյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի ժամանակացույցի նախագիծը: Ըստ նախագծի, ուսումնական գործընթացը պետք է մեկնարկեր հունվարի 19-ից, սակայն հաշվի առնելով գրիպի համաճարակը և տնօրենի առաջարկը ուսումնական գործընթացը պետք է սկսել հունվարի 29-ից:

Շարունակելով ելույթը Ն.Եգորյանն առաջարկեց բաց թողնված դասաժամերը լրացնել ավելացնելով 7-8 և 9-10 դասաժամեր: Նա նշեց նաև, որ ժամանակացույցը նախապես ներկայացվել է ամբիոններին, նրանց հետ հանդիպման ընթացքում առարկություններ չեն արձանագրվել: Այսպիսով խնդրում եմ քննարկել նախագիծը և երաշխավորել ներկայացնելու

տնօրինական խորհուրդ:

Ինչ վերբերվում է 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատնքնրի ընթացքի և ընթացիկ վիճակի վերաբերյալ, ապա նշեց, որ ներկա պահին պատրաստ է դասացուցակը և ժամանակացույցը: Համաձայն ամբիոնների պլանի մինչև հունվարի վերջ ամբիոններում կկազմակերպվենլ ամբիոնի նիստեր, որտեղ դասախոսները կնրկայացնեն իենց թեմատիկ պլանները ուսումնական մասի վարիչին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Լ.Հարությունյանն իր ելույթում նշեց, որ այդ նախագիծը ներկա իրավիճակում լիովին հնարավոր է կազմակերպել, և բոլոր բաց թողնված դասաժամերը ըստ ժամանակացույցի կարելի է արդյունավետ լրացնել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի աշխատանքների ժամանակացույցի նախագիծը երաշխավորել և ներկայացնել տնօրինական խորհուրդ:
3. Առաջարկել տնօրինական խորհուրդին 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացը սկսել 29.01.2019թ.:

3. **Լսեցին՝** Որակի ապահովման պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման կառուցվածքի վերանյման առաջակության վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման կառուցվածքի վերանյման առաջակության վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն լինելով պետք է ուսումնական գործընթացները իրականացնի ժամանակին համապատասխան, այդ իսկ պատճառով տնօրենի հանձնարարությամբ իրականացվել է Քոլեջի գործող կառավարման գծային կառուցվածքի վերանայում:

Որպես հիմնավորում ներկայացրեց իր կողմից իրականացված ուսումնական հաստատությունների կառավարման կառուցվածքային համակարգի համեմատական վերլուծությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Դասախոս Մ.Նանյանն իր ելույթում նշեց, որ ՈԱ պատասխանատուի կողմից իրականացված ուսումնասիրությունը շատ արդիական էր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քոլեջում իրականացվում ինչպես ուսումնական, այնպես էլ կառավարման

համակարգերի բարելավման աշխատանքներ, ապա իրոք գործող կառավարման համակարգի վերանայումը անհրաժեշտություն է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կառավարման գծային կառուցվածքի ներկայացված նախագիծը երաշխավորել և ներկայացնել Տնօրինական խորհուրդ քննարկման:

4. Լսեցին Որակի ապահովման պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2016-2025 թվակնների զարգացման ռազմավարական ծրագրի վերանայման առաջարկության վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր բովանդակային ելույթում ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2016-2025թթ. ռազմավարական զարգացման գործող ծրագրի բաց կողմերը, մասնավորապես՝ առկա չեն հստակ գործողություններ, խնդիրների իրականացման քայլերը, գործողությունների վերջնարդյունքները և այլն:

Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը հավելեց, որ Քոլեջի կառուցվածքային փոփոխությունները պահանջում է նաև վերանայել գործող ՌԶԾ-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Մանկավարժական խորհրդի անդամներին սեղմ ժամկետում ՈԱ պատասխանատուին ներկայացնել նոր ՌԶԾ-ի վերաբերյալ առաջարկներ:
3. Նոր ՌԶԾ-ի մաշակված նախագիծը քննարկել և ներկայացնել Տնօրինական խորհուրդ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Ք.Երևան **10.05.2019թ.**

2019թ. մայիսի 10-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի ընդլայնված նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները, տնօրեն՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ, հրավիրված՝ կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանը և պրակտիկայի պատասխանատու՝ Ն.Սահակյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և այն դրվեց քվեարկության, որն էլ միաձայն ընդունվեց:

1. Քոլեջի ներքին նորմատիվ իրավական ակտերի ընթացքի մասին:

(Զեկուցող, Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):

2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվակնների զարգացման ռազմավարական ծրագրի նախագծի ընթացքի մասին:

(Զեկուցող, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Կադրերի բաժնի վարիչ Ա.Գյոզալյանի ելույթը Քոլեջի ներքին նորմատիվ իրավական ակտերի ընթացքի վերաբերյալ:

Ա.Գյոզալյանը ողջունելով Խորհրդի անդամներին ներկայացրեց Քոլեջում գործող ներքին նորմատիվ իրավական ակտերը: Նա նշեց, որ ներքին նորմատիվ իրավական ակտերը հիմնականում մշակված և հաստատված են ՀՀ ԿԳ նախարարության կողմից, որոնք մենք ուղղակի տեղայնացրել ենք: Հաշվի առնելով կրթության բարեփոխումները և քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագման գործընթացի մեկնարկը, նա ներկայացրեց Տնօրինական խորհրդի 18.03.2019թ. որոշումը (արձանագրություն 4), որի հիման վրա ստեղծվել է աշխատանքային խումբ: Խմբի կողմից վերանայվել և դեռ վերանայվում են քոլեջում գործող մի շարք ընթացակարգեր և կարգեր: Ներկայումս մշակման փուլում են նոր փաստաթղթերը: Եզրափակելով ելույթը Ա.Գյոզալյանը փաթեթով ներկայացրեց վերանայված և մշակված նոր փաստաթղթերի նախագծերը և առաջարկեց հանգամանորեն ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ կամ դիտարկումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ն.Եգորյանն իր ելույթում նշեց, որ ուսումնական գործնթացը կարգավորող ներքին իրավնորմատիվային փաստաթղթերը իրոք ունեին վերանայման և լրամշակման կարիք: Ամփոփելով ելույթը, առաջարկեց սեղմ ժամկետներում եթե կլինեն առաջարկներ ներկայացնել ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Մանկավարժական խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել նոր մշակված փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունն:
2. Հանձնարարել Կադրերի բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին հաջորդ նիստում ներկայացնել առաջարկությունները:

2. **Լսեցին՝** Որակի ապահովման պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվակնների զրգացման ռազմավարական ծրագրի ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր ելույթում ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի նոր 2019-2024 թվականների Ռազմավարական զագացման ծրագրի նախագիծը: Ելույթում նշեց, որ նոր ՌԶԾ-ը իր մեջ ներառում է հստակ ձևակերպված նպատակներ, խնդիրեր, գործողությունների իրականացման քայլեր և իրատեսկան գնահատման արդյունարար ցուցիչներ: Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը նշեց նաև, որ ուսումնասիվել են Հայաստանի ինչպես քոլեջների, անպես էլ բուհերի ՌԶԾ-ի կառուցվածքները և պահանջները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ամբիոնի վարիչներ Լ.Բաբայանը, Ա.Գրիգորյանը իրենց ելույթներում նշեցին, որ իրոք, ՌԶԾ-ի այս տարբերակը շատ հասկանալի և մատչելի է: Ձևաչափը պարզ և ընկալելի է ինչպես ուսանողների, դասախոսների, այնպես էլ արտաքին շահակիցների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:
2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զագացման ծրագրի նախագիծը երաշխավորել և ներկայացնել Տնօրինական խորհուրդ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

Ք.Երևան **21.06.2019թ.**

2019թ. հունիսի 21-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նիստ՝ նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները, տնօրեն՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և այն դրվեց քվեարկության, որն էլ միաձայն ընդունվեց:

1. 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:
(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. 2018-2019 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին հաջորդ կուրս փոխադրելու մասին:
(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ նախարարության կողմից հաստատված կարգի ժամանակացույցին համապատասխան կազմակերպվել և անցկացվել են պետական ամփոփիչ ատեստավորման քննությունները:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի հրամաններով ձևավորվել նշանակվել են «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2018-2019 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներ և հանձնաժողովի նախագահներ:

Եզրափակելով ելույթը, Ն.Եգորյանը ներկայացրեց նաև հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին ուսումնասիրել հանձնաժողովների նախագահների առաջարկությունները և մասնագիտական ամբիոններին հանձնարարել հաջորդ ուստարվա ընթացքում իրականացնել բարելավման միջոցառումներ:

2. **Լսեցին.** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2018-2019 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու վերաբերյալ:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում ներկայացրեց 2018-2019 ուստարվա ուսումնական պլաններով նախատեսված քննաշրջանի ժամանակացույցով ստուգարքներն ու քննությունները հանձնած միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով կրթական ծրագրով սովորող ըստ մասնագիտությունների և կուրսերի ուսանողների ցանկը:

Եզրափակելով ելույթը Ն.Եգորյանն առաջարկեց ցուցակում ներառված դրական գնահատական ստացած ուսանողներին փոխադրել հաջորդ կուրս: Փոխադրվողների ցանկում ներառված են նաև փորձաշրջանում գտնվող ուսանողները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Ցուցակում ներառված ուսանողներին երաշխավորել փոխադրել հաջորդ կուրս, համապատասխանաբար:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան